

ԼԱՏԻՆԱԲԱՆ ՏԱՅԵՐԵՆԸ՝ ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

Տայոց լեզվի պատմության առանցքային հարցերից մեկը լեզվական փոփոխությունների գոյակցության իրողությունն է. ամեն գրական լեզու ունի գուցա հետ գործածվող փոփոխականներ, որոնք դրսևորվում են օրինաչափ գործառնություններով, սակայն հայերենի հարցում իրողությունն այն է, որ եղել են նաև արհեստականորեն պարտադրված լեզվական փոփոխականներ, ինչպես գրաբարի շրջանում հունարան հայերենը, միջին շրջանում և նոր շրջանի աշխարհաբարացման ենթաշրջանում՝ լատինարան հայերենը: Թերևս երկու փոփոխական էլ բավականաչափ ուսումնասիրվել են, սակայն նկատվում է առավել հիմնավոր և ամբողջական ուսումնասիրության անհրաժեշտությունը:

Ահա այս նպատակին է ուղղված վերջերս լույս տեսած Վազգեն Տամբարձումյանի¹ արժեքավոր ուսումնասիրությունը:

Գրքում քննարկված է երեք առանցքային հարց. լատինարան հայերենի

ա/ առաջացումը, բ/ արհեստականորեն արմատավորումը, գ/ բնականոն վերացումը կամ հաղթահարումը:

Այս հարցերն իրենց լուծումն են ստանում ոչ միայն եղած ուսումնասիրությունների ավյակների օգտագործումով, «այլև առավելապես լեզվական փաստերի լայն ընդգրկմամբ ու քննությամբ» (էջ 2):

Նկատագրության համար առաջադրված առանցքային հարցերը և նրանց հետ առնչվող էական խնդիրներն են թելադրում աշխարհաբարի կառուցվածքը, որի մասերը փոխանակաբանական սերտ կապ ունեն, պայմանավորված են միմյանցով: Սկզբունքների մշակումից, նկարագրական բնութագրումներից անցում է կատարվում վկայություններին, նրանց գուցադրական վերլուծություններին, պատմական ժամանակներում գործածության առանձնահատկություններին, շուրջ 500 փոխաբերված ընթացքում լատինարան հայերենի վայելություններին, նրա գրական լեզվի փոփոխական կոչվելուն և նույնպիսի հաջողությամբ գործածությունից վերանայու՝ հաղթահարվելու գործընթացին ու պարզառնություններին:

Փորձենք ընդհանուր գծերով բնութագրել աշխարհաբարը: Այսպես՝

1.ա/ Աշխարհաբարը նվիրված է ԺԴ-ԺԸ դարերում որպես գրական-գրավոր լեզու գործառնող լատինարան հայերենի ամբողջական ուսումնասիրությանը, քանի որ մինչև այժմ չունենք լեզվական այդ փոփոխականի նվիրված նման ծավալի որևէ աշխարհաբար:

բ/ Առաջադրված հարցերի քննությունը կատարվում է գրավոր՝ հին փոխադրություն ունեցող և ձևագիր վիճակով հայերենի հուշարձանների ընձեռած փաստական նյութի, երկրորդաբար՝ հայ բանասիրության, լեզվաբանության ունեցած ձեռքբերումների ստույգ ավյակների հիման վրա:

Գրավոր աղբյուրները շար ևն, մեծ մասամբ եկեղեցական-դավանաբանական և մեկնողական բովանդակություն ունեն. քիչ են քերականական, հրապարակախոսական աղբյուրները:

1 Վազգեն Տամբարձումյան, Լատինարան հայերենի պատմություն, Եր., 2010, 371 էջ:

գ/ Նոռմեական եկեղեցու լեզվական պարպադրանքը իրագործվում էր թե մեռած լատիններենի և թե մեռած գրաբարի վերաբերմամբ. և դա կատարվում էր ոչ թե բնականորեն, այլ արհեստական մոտեցման պայմաններում:

դ/ ԺԴ-ԺԸ դարերի լատինաբանությունը ըստ դարերի միաբնակ գործառնություն չի ունեցել. ԺԴ դարի սկզբներից մինչև 70-ական թվականները գրվում և թարգմանվում են եկեղեցական, իմաստասիրական, քերականական և այլ մեծ թվով աշխատանքներ, քան հաջորդ րասնամյակներում, նույնիսկ հարյուրամյակում: ԺԷ դարում աշխուժանում է նման գործունեությունը՝ հիմնվելով մի կողմից միաբարական նոր փալի գործունեության, մյուս կողմից սրանց գրական քարոզչության մարտունակության վրա:

Նաջորդ մեկուկես դարի ընթացքում հայության փոփոխական, առավելապես քաղաքական անմիջապես ու կախյալ վիճակի, Առաքելական Եկեղեցու թուլացման պարճառով լատինաբան հայերենով և առհասարակ քիչ գրավոր հուշարձաններ են ստեղծվում: Այդ հանգամանքները հեղինակին մտահոգության են մղում. «Լատինաբան հայերենի պարմության ավելի լայն ուսումնասիրումն, անշուշտ, ապագային է պարկանում» (Էջ 6), - կրակացնում է հեղինակը:

ե/ Գրավոր աղբյուրները լեզվական երևույթների թնության պարադն են, նույնքան կարևոր են լատինաբան հայերենի պարմության փուլերի առանձնացումը, գործառական ոլորտների բաժանումը, լեզվական փաթեթակիչ հարկանիշների սահմանազարումը, ինչպես նաև հունաբան հայերենի հետ համեմատությունը և այլն:

զ/ Նեղինակն ընդգծում է, որ ունի մշակված սկզբունքներ, որոնք առաջ են քաշվել իր «Գրաբարի գործառնությունը որպես գրական լեզու ԺԸ-ԺԹ դդ.» գրքում և մյուս ուսումնասիրություններում: Սույն աշխատանքը ինչ-որ իմաստով լրացնում է իր նախորդ աշխատանքները՝ կապված առաջին հերթին հայերենի պարմության մեջ լատինաբանության երևույթի հետ (Էջ 6):

2. Բոլոր չորս գլուխները սկսվում են ներածական դիպրոդություններով, փվյալ գլխում քննարկվող նյութի հակիրճ բովանդակությամբ, որն ընթերցողին անմիջապես կողմնորոշում է խնդրո առարկայի հարցում: Սա գիտական հետազոտություններում ընդունելի և արդյունավետ եղանակ է:

Ասվածը փաստենք մեկ օրինակով:

«Լատինաբանության ուսումնասիրության պարմություն» գլխի 3 Էջանոց ներածականում նշվում է, որ հայ-հռոմեական (լատինական) հարաբերությունները սկիզբ են առել -Ք. ծ. ա. 60-ական թթ. և լեզվաէթնիկական ու գուր լեզվական շփումներով փնել են մինչև 1780-ական թվականները: Այդ հարաբերությունները պարմամշակութային և լեզվական առնչությունների երկու փուլ են ունեցել՝

ա/ հայ-հռոմեական (կամ հին,-Ք. ծ. ա. 66 - մ.թ. 429 թ.),

բ/ հայ-լատինական (կամ նոր, ԺԳ-ԺԸ դդ.):

Նայ-լատինական հարաբերությունները արարացվել են գրավոր աղբյուրներում և հետագա ուսումնասիրություններում. «Դրանք մարենագրական երկեր են, հայագիտական և հայերենագիտական հետազոտություններ... Այսպեղ քննարկում են այդ աշխատություններից, մեր կարծիքով, ամենակարևորները» (Էջ 10), որից երևում է նաև, թե ուսումնասիրողն

ինչ աշխարհայացք ունի, ինչպիսի գիտական հակումներ ու երկի բովանդակային կողմնորոշվածություն:

Այսպեղ քննվում են մի քանի տասնյակ հեղինակների երկերն ու ուսումնասիրությունները: Նախ հեղինակն անդրադառնում է հայերեն գրավոր աղբյուրներում հարցի արծարծմանը՝ սկսած ԺԱ-ԺԲ դարերից մինչև ԺԷ դարը: Նկատի են առնվում Մարթնոս Ուռուպեցու, Սմբատ Սպարապետի, Ներսես Լամբրոնացու, Գրիգոր Անավարզեցու, Եսայի Նչեցու, Մխիթար Այրիվանեցու, Վարդան Բարձրաբերդցու, Կիրակոս Գանձակեցու, Սյրվիանոս Օրբելյանի, Գրիգոր Տաթևացու, Բարդուղիմեոս Մարաղացու, Նովհաննես Բռնեցու, Թովմա Մեծովեցու, Մխիթար Ապարանեցու, Սիմեոն Զուղայեցու, Աղեքսանդր Զուղայեցու, Նովհաննես (Մուրբուզ) Զուղայեցու, Պողոս Պիրոմալիի, Ոսկան Երևանցու, Վարդան Նունանյանի, Նովհաննես (Նով) Կոստանդնուպոլսեցու, Սիմեոն Լեհացու, Առաքել Դավրիժեցու, Կղեմես Գալանոսի եւ ուրիշների երկերը: «Նայոց լեզվի պարամության կարևորագույն աղբյուր են նաև հիշյալ դարերում երևան եկած հիշատակարաններն ու ժամանակագրությունները... Մեզ հետաքրքրող հարցի պարզաբանման նպատակով մանրամասն քննության ենթ առել նաև այդ կարգի գրական հուշարձանները» (Էջ 34),- գրում է հեղինակը:

Սրան հաջորդում է հայագիտական աշխատություններում հարցի մեկնաբանությունը, անդրադարձ է կատարվում շուրջ երկու տասնյակ խոշոր եւ անվանի պարամաբանների, փիլիսոփաների ու բանասերների աշխատություններին, որոնցում հեղինակներն իրենց կարծիքներն են հայտնում, մեկնաբանություններ անում հայ-լատինական հարաբերությունների, կաթոլիկական եկեղեցու գործունեության, լատինաբանության, միաբարական, ունիթորական շարժումների եւ այլ հարցերի վերաբերյալ: Այսպեղ էլ նշվում են Միք. Չամչյանի, Դևոնդ Ալիշանի, Լեոյի, Վ. Բրյուսովի, Ն. Մանանդյանի, Աշ. Նովհաննիսյանի, Գ. Զաքրիանյանի, Եղիշե Դուրյանի, Արթ. Զամինյանի, Մ. Աբելյանի, Ռ. Իշխանյանի, Վ. Չալոյանի, Ն. Գաբրիելյանի, Ս. Արեշտյանի, Արել Մխիթարյանի, Իս. Սրապյանի, Մ. Օրմանյանի, Ն. Միրզոյանի, Գ. Գրիգորյանի եւ այլոց անունները:

Երրորդ բաժինը վերաբերում է հարցի գնահատությանը հայերենագիտական աշխատություններում, որոնց հեղինակները՝ անվանի քերականներ, մեծ եւ նշանավոր լեզվաբաններ, գնահատում են լատինաբանությունը, լատինաբան հայերենը՝ որպես ԺԷ-ԺԸ դարերի գրական լեզվի փառքերակ, եւ նշում նրա դրական եւ բացասական կողմերը: Այսպեղ հիշատակվում են Միք. Չամչյանը, Գաբրիել Ավերիբեյանը, Մեսրոպ Տեր-Նարությունյանը, «Նոր հայկազյան բառարանի» հեղինակները, Արսեն-Բագրատունին, Ա. Այվրեյանը, «Բազմավեպի» /1855 թ./ հոդվածագիրները, Էդ. Նյուրմյուզյանը, մեր ժամանակներից՝ Ն. Աճառյանը, Էդ. Աղայանը, Գ. Զահուկյանը:

Վ. Նամբարձումյանի աշխատանքը սոսկ շարադրանք չէ. դրա համար պահանջվել են գիտական աչալքություն, նյութի բարձր իմացություն եւ ճշգրիտ մոտեցում, ուրիշների կատարած ուսումնասիրությունները քննելու եւ գնահատելու անկողմնակալություն:

Նկարագրության նյութ դարձած հարցերը քննվում են բազմակողմանիորեն, որը հնարավորություն է ընձեռում առավել մանրամասնորեն թափանցել երևույթների խորքը, ներկայացնել հայտնի եւ նույնիսկ երկրորդական կարծիքներն ու բնութագրումները, արժեքներ, գնահատել դրանք, անհրաժեշտության դեպքում առարկել, մերժել կամ լրացնել ու հաստատել:

տել նոր փաստարկներով, ինչպես նաև տեսական դատողություններով և հիմնավորումներով, որից ընթերցողը նախ ամբողջական և ճիշդ պատկերացում է կազմում քննվող հարցի վերաբերյալ, ապա նաև հեղինակի գիտական նյութի ստույգ ու բազմակողմանի իմացության վերաբերյալ:

Ասվածը ցույց տալու համար այս անգամ էլ ընտրենք երկրորդ գլուխը:

«Լատինաբանության տեղը գրական հայերենի պատմության մեջ» գլխում առանձնացվում են հինգ բավականին կարևոր և տարողունակ հարցեր՝

- ա/ լատինաբան գրավոր աղբյուրների տեսությունը,
- բ/ լատինաբան հայերենի պատմության ենթաշրջանները,
- գ/ լատինաբան հայերենի գործառության ոլորտները,
- դ/ լատինաբան հայերենի տարբերակիչ հատկանիշները,
- ե/ գրական հայերենի հունաբան և լատինաբան տարբերակները:

Այս բոլոր հարցերը բնութագրվում, մեկնաբանվում են հարուստ փաստերով՝ հեղինակների, աղբյուրների, հրատարակիչների և հրատարակչությունների, հրատարակչության վայրերի և քաղաքների տասնյակ ու հարյուրավոր անուններով, լեզվական վկայություններով և այլն: Ընդ որում՝ հաշվի են առնված դարերն ու ժամանակները, տեղերն ու տարածքները, տնտեսական և քաղաքական վիճակներն ու հարաբերությունները, հունաբանության աշխուժացման կամ թուլացման խնդիրները և այլն:

Ուշագրավ է նաև հետազոտության եղանակը. գրավոր աղբյուրը լիովին բացահայտելու նպատակով հեղինակը ստիպված է լինում օգտագործել հետին ժամանակների որոշ գրչագրեր: Նախա միեւնույն բնագրի ձեռագիրն ու տպագիրը համեմատվել, գուցադրվել, իսկ եթե բնագիրը թարգմանական է, համեմատվել է նաև բնագրի հետ, մեծ չափերով հանդիպող աղբյուրների պարագայում կատարվում է ընդդրություն՝ հաշվի առնելով ապագայում քննության շարունակական լինելը,

«որպեսզի ավելի առաքկայական ձևով, առավել համոզիչ ու ամբողջական ներկայանան այդ փոխանցման ստեղծման իրադրությունն ու ժամանակը» (Էջ 87):

ԺԴ դարի առաջին կեսի գրավոր աղբյուրները Բարդուղիմեոս Մարաղացու և նրա աշակերտների ջանքերի արդյունք են, մի պատկառելի գրականություն, որը բնույթով ավելի թարգմանական է, բովանդակությամբ՝ կրոնադավանաբանական, մասամբ՝ աստվածաբանական-փիլիսոփայական, քերականական-ճարտասանական և այլն: Նշվում են հեղինակներ՝ Արիստոտել (Ե դ. -Ք. ա.), Ալբերտ Մեծ (ԺԳ դ.), Թովմա Աքվինացի (ԺԲ-ԺԳ դ.), Նովիան Ֆիդանացու (ԺԳ դ.), Ջիլբերտուս Պոռեպացի (ԺԱ-ԺԲ դ.), Բարդուղիմեոս Բոլոնիացի / Մարաղացի (ԺԴ դ.), Պերրոս Արագոնացի (ԺԴ դ.), Նիկոլայոս Լյուրացի (ԺԳ-ԺԴ դ.), Բեդան / քահանա (Է-Ը դդ.), Նովիան Անգլիացի (ԺԴ դ.), Նովիանուս Բոնեցի (ԺԴ դ.) և այլք: Սրանց մեջ ԺԴ դարի ամենամեծ հեղինակ է ճանաչվում Բարդուղիմեոս Մարաղացին: ԺԵ դարում աղբյուրների նվազում-անկում է նկատվում, որ տեսում է շուրջ երկու դար: Նախորդ դարի վերջերից, հատկապես ԺԵ դարում լատինաբան հայերենով ստեղծվում է հսկայական ձեռագիր և տպագիր գրականություն: Այս դարում հայոց ամենանշանավոր մշակութային կենտրոններ էին Տոմար, Ամսերդամը, Վենետիկը, Մարսելը, Նոր Զուդան, Կ.Պոլիսը, Լիվոռնոն, մասամբ՝ Փարիզը, Լայպցիգը, Միլանը և այլն:

Տրվում են փողեկություններ ԺԷ-ԺԸ դարերի՝ հարյուրից ավելի այն գրավոր աղբյուրների մասին, որոնք առնչվում են լաբինաբանության հետ: Բարձր գնահատանքի են արժանանում Կոնստանտին Գալանովի, Նովի. Կոստանդնուպոլսեցու, Նակոբ Վիլյուրի, Ոսկան Երևանցու, Խաչատուր Էրզրումցու, Նովիանինս Բոնեցու երկերը, Ֆ. Ռիվոլայի, Ասր. Ներսեսովիչի բառարանները և այլ գործեր:

Լաբինաբան հայերենի պարամության ենթաշրջանների բաժանումը նորովի քննություն է, որից պարզվում է, թե որ ենթաշրջանում լաբինաբանությունը ինչ ազդեցություն է կրել և զարգացման ինչ մակարդակում է եղել: Նշվում է երեք ենթաշրջան՝

1/ Լաբինաբան հայերենի սկզբնավորման և թուլացման ենթաշրջան (ԺԴ-ԺԵ դդ., ավելի սպույզ՝ 1316-1502 թթ., այսինքն՝ 186 վարի): Այս ենթաշրջանը հայերենի է հասարակական կյանքի վայրիվերումներով, պարերագմներով, ավերածություններով, հայության փողահանություններով, գաղթերով և աննշան խաղաղ ժամանակներով: Նեղինակը պարզ կերպով ներկայացնում է այդ ծանր ժամանակների պարամությունը (ունիթորական և հակաունիթորական հոսանքներ, Կիլիկյան թագավորության թուլացում, Զաքարյանների իշխանության անկում, Ջելալիդյանների իշխանություն, կարակոյունլուների ավերածություններ, Լանկ Թեմուրի արշավանքներ, ակկոյունլուների ավերածություններ, Ջեհանշահի փրկակարություն, Սեֆյան հարսության հաստատում Նայասարում, միարարական նոր կրթական և մշակութային հաստատություններ): Միայն Լվովը դառնում է հարավարևելյան Երոպայում սփռված հայության եկեղեցու պարվարը: 1441 թ. Նայոց կաթողիկոսական աթոռը Սահգ բերվում է Էջմիածին:

Այս ենթաշրջանը բնութագրվում է նաև լեզվական որոշ առանձնահատկություններով: Նովիանինս Բոնեցու քերականության փաստերի հիման վրա ինը կերպով ներկայացվում են այդ առանձնահատկությունները՝ գրական նորմից կարարվող շեղումներ, երկհնչյունների պարզեցում (**դից**ագնաբար), լաբիներենի օրինակով ներթափանցումներ, ներգոյական հոլովի դրսևորում **բն**(ն), ինչպես նաև **մակ**, **ենթ** մասնիկներով բառերի, եզրույթների պարամություններ (անձնական կամ անձանական բայ, գոյականանիշ, ջեռուղիական, սափինական, անփիթեղիս, սիմթոգիս), գրաբար և միջին հայերենի ձևեր (...կու սիրեմ, մակար թե կու սիրելիք), շարահյուսական այլուայլ ոճական կառույցներ:

2/ Լաբինաբան հայերենի անկաման և վերականգնման ենթաշրջան (ԺԶ-ԺԷ դդ., ավելի սպույզ՝ 1502-1717 թթ., այսինքն՝ 215 վարի): Այս ենթաշրջանի համար նշվում են երկու կարևոր փուլեր՝ 1/ գրերեն ԺԶ դար (1502-1584 թթ.), 2/ ավելի քան ԺԷ դար (1584-1717 թթ.), որոնք կարելի է կոչել Էմպիրիկ-փեխնիկական և ռացիոնալիստական մոտեցումների, դրսևորումների փուլեր:

ԺԶ դարում քաղաքական աննպաստ պայմանների պարամով լաբինաբան հայերենը լուրջ առաջընթաց չի ունենում. այդ շրջանում պակասում են գրավոր աղբյուրները:

ԺԷ դարում ի հայտ են գալիս նոր աղբյուրներ, որոնք առաջ նյութ են պարունակում լաբինաբան հայերենի պարամության համար, հարկապես բառապաշարի շերտերի, եզրութաբանության խնդրում, քերականական կառուցվածքում մրցվում են նոր երևույթներ, կարարվում են բազմապիսի փոփոխություններ: Ն. Աճառյանը ժամանակի լաբինաբան հայերենի մասին պարկերացում փալու համար ընտրել է Նովիանինս Կոստանդնուպոլսեցու «Զարթիլն հայկաբանութեան կամ քերականութիւն հայկական» (Նոմ, 1674) գիրքը:

3. Լաւրինաբանության հաղթահարման ենթաշրջան (ԺԸ դ., ընդգրկում է 1717-1799 թթ.):

Լաւրինաբանությունը եւ գործածավող լաւրինաբան հայերենը «լաւրինասեր» միաբարների ջանքերի արդյունք էին: Այս ենթաշրջանում դրանց կասեցումը կամ հաղթահարումը «հեպտեանք եւ Միսիթար Սերասպացու եւ նրա ներքին աշակերտների հեպտեոական ու անդադրում հակառակության: Միսիթարյանների այս ձեռնարկումը պատկերվում է լիակատար հաջողությամբ» (Էջ 115): Յոթ կերպերի սահմանում հաջողաբար բերվում են այն միջոցները, որոնցով հնարավորություն է ստեղծվում վերացնելու լաւրինաբան հայերենի արեւմտական ձևերը՝ կիրառելով գրաբարյան ձևերը, օրինակ՝ **ներհեղույ** (փխ. հեղույ), **կենցաղավարիլ** (փխ. կեալ), **ըն սովում** (փխ. ի քաղց), **մեծագոյն** (փխ. մեծ), **սպեղծեցեալ** (փխ. սպեղծեալ), **ընմարդում ումեր բեկանելում** եւ **մահկանացում** (փխ. ի մարդ Կկար եւ մահկանացու) եւ այլն:

«Լաւրինաբան հայերենի գործառության ոլորտները» բաժնում կարարվում է լաւրինաբան գրավոր աղբյուրների բաշխում ըստ գործառական ոճերի՝ գրական (=գեղարվեստական), գիտական եւ հրապարակային (=հրապարակախոսական): Առանձին-առանձին բնութագրվում են գործառական այս ոճերը՝ համապատասխան գրականությամբ: Գիտական ոճը ներառում է եկեղեցական, փիլիսոփայական, պարմագիտական, ճարտասանական, քերականական աշխատություններ: Մի անգամ եւս ուշադրության են արժանանում Նով-հաննես Քոնեցու, Նովհաննես Կոստանդնուպոլսեցու, Կոնստնտին Գալանոսի, Նակոբոս Վիլյուրի, Ասրվաճապուր Ներսեսովիչի եւ այլոց աշխատությունները, որոնք հեղինակներն են լաւրինաբան հայերենի գործառության ոլորտներում:

«Լաւրինաբան հայերենի քարտեզակիչ հարկանիշները» հարցը կամ բաժինը ծանրաբեռնված է լեզվական նյութի վկայություններով. ընկերված են՝ հնչյունական, բառային, ձևաբանական, շարահյուսական հարկանիշները, որոնց համար փաստեր են վկայվում հեղինակավոր հանդեսներից («Երոպա», «Բամավեպ»), Գ. Զարբանալյանի, Ն. Աճառյանի, Գ. Զահուկյանի, ուսումնասիրություններից: Բավական ծավալուն է ձևաբանությանը վերաբերող մասը (Էջ 149-160):

«Գրական հայերենի հունաբան եւ լաւրինաբան քարտեզակները» կարեւորագույն բաժին է. բանն այն է, որ այս քարտեզակները պարմական ժամանակների ծնունդ են եւ խաղաղուս առնչվում են գրական լեզվի պարմության հեղինակ, ուստի հեղինակը ցույց է տալիս երկու հայերենների միջեւ եղած ընդհանրությունները եւ նրանցից յուրաքանչյուրի թողած «ռացիոնալ հարկեր»: «Հունաբանությունը, - գրում է հեղինակը, - դառնում է ոչ միայն ընդօրինակման հիմք, այլեւ մի քանակ խթան նոր եւ նման ձեռնարկման համար.. Սա է այն բնութագիրը, թե լաւրինաբան հեղինակներն ինչպիսի հանգամանքներում եւ ինչ ձևով են դիմում հունաբան կաղապարին, օգտվում նրա ստեղծած միջոցներից» (Էջ 177-178): Անդրադարձ է կարարվում հունաբան եւ լաւրինաբան քարտեզակների լեզվական երևույթներին, քննվում են բառական եւ ձևաբանական միավորներ:

4. Նեղինակը կարարում է համառ, քրեաջան եւ մանրակրկիտ աշխատանք, որի շնոր-

հիվ մի կողմից բարձրանում է ամրապնդվում է լեզվաբան-անհատի վարկանիշը, մյուս կողմից սպառիչ լուծում է ունենում քննարկվող նյութը:

Ամենաձավայուն՝ «Լապինաբան հայերենի բնութագիրը» գլուխը (235 էջ) հարուստ է լապինաբան հայերենի բաժինների յուրահապուկ բնութագրություններով, բյուրավոր փաստերով, օրինակներով ու վկայություններով, առաջորեն հեղեղված նկարագրություններով ու խորնիխոր վերլուծություններով:

Առանձին-առանձին բնութագրվում են լեզվի հեպտայա բաժինները:

1) Նկյունական փոփոխություններ: Օրինակ են բերվում **կ ա, ե, է, ը, ի, ո, օ** ձայնավորների՝ գրաբարից շեղված, երբեմն անհարկի կիրառությունների, այլև գեղջումների վերաբերյալ: Ձայնավորների հետ երկբարբառներ են կազմում **յ** եւ **ւ** ձայնորդները. կան նաև դրանց վերաբերյալ օրինակներ: Երբեմն գուցահեռաբար նշվում են բառերի կամ կապակցությունների լապիններեն համարժեքները² (Օր. ադամաին - Adameus, անյերկբայ - certus): Բաղաձայններից վկայություններ են արվում **դ-խ, գ-ս, ր-ռ** շփականների, **դ, փ, թ, գ, կ, ք** պայթականների, **ձ, ծ, ց** հպաշփականների, **լ/ղ-ի** կիրառություններով:

2) Բառապաշարի տեղաշարժեր: Սա մի արեւմախոսության նյութ է. մանրամասնված են բառերի տեղաշարժերը, հիմքակազմությունները, բառերի բաղադրիչների խոսքիմասային արտահայտությունները, հոդակապով եւ անհոդակապ կառույցները, նախածանցով, վերջածանցով բաղադրված կազմությունները, բայակազմից մասնիկներով բառերը / բայաձևեր/, այլ լեզուներից կադարված փոխառությունները, որոնք խմբավորված են յոթ կերպով՝ ըստ իմաստային եւ գործառական հարկանիշների, առանձին տրված են արաբերենից, պարսկերենից (նաև թուրքերենի միջոցով), հունարենից, ՆՏԲ-ից, Կղեմես Գալանոսից վերցված բառեր, Ֆրանկոսկոս Ռ-իվոլայի բառարանի հայերեն համարժեքներ, խոսակցական լեզվին բնորոշ արտահայտություններ, նոր իմաստային, խոսակցական լեզվին բնորոշ արտահայտություններ, նոր իմաստային կիրառություններով բառեր, նորաբանություններ եւ այլն: Բնութագրությունները հասարակվում են բազմաթիվ օրինակներով:

3) Ձևաբանական երևույթներ: Նշվում են գրական նորմայից կադարված բազմապիսի շեղումներ, որոնք հանդիպում են թե՛ հոլովման, թե՛ խոնարհման համակարգերում:

Նդրվման համակարգում **ի** ձայնավորով վերջացող բառերի սեռականը հանդիպում է ոչ թե **ի>ւ** հնչյունափոխությամբ, այլ **ի>0/գրո/ ձևով**. եկեղեցո//եկեղեցոյ//յն, հոգո//հոգոյն//հոգոց, քոյր-քվեր//քրերն//քրեր, քուր, ամ-ամոյ / փի. ամի /. աստուծո, Արամագդա. երկրնիս եւ այլն: Անեզական բառերը գործածվում են եզակիով / դեմն, միս, կեանն-կենին, արեւել, կարծն: Մարդիկ եզակի է, հոգն. մարդիք // մարդիկք: Նոզակի կազմություններ՝ կնիկունք, պապերն, փոքրերն: Ներգոյականը հանդիպում է ըն/ըմ/, ն, ներ մասնիկներով, սակավ են մակ-ով կազմությունները / մակ մրածում, մակ սաստություն/, կան ի նախդիրով եւ ոչ մասնիկով/ ի գլխոջ/ ձևեր: Ածականի եւ թվականի հոլովման, աստիճան կազմելու հարցում փոփոխություններ կան, շար են գունեղ մասնիկով ձևերը / գերագունեղ, իմաստնագունեղ,

² Լապիններեն այսպիսի համարժեքները գործածված են բոլոր տեղանի բնութագրություններում եւ նկարագրություններում:

ողորմածագունեղ, փրկաւորագունեղ /գունեղ=գոյն/, հանդիպում են հինգերորդ, իներորդ, քսանևհինգերորդ: Բազմաբղետ են դերանունների փոփոխությունները / նիւրում, ներ ինքեանց, իտոցայոց, ինորայոց, ի նորայնոյն, ի տորայոյն, ընդ սայ, գնայ, ըննոսում, նայսմիկ/: Մակբայներ են կերպովում ածականներից՝ ածանցների միջոցով/ հաւաքարմագունեղապէս, մրադրագունեղապէս/: Բային վերաբերող փոփոխություններն անսահման շար են, գործադրել են 3 կարգի միջոց՝

ա/ հին հայերենի մեջ հունարան դպրոցի սրեղծածի օգտագործում,

բ/ գրաբարի ոչ կանոնական՝ տարբեր կարգի շեղում հանդիսացող ձևերի կանոնավոր գործածում,

գ/ նոր կամ լրացուցիչ արհեստական ձևերի հորինում (էջ 287):

Բայի մեջ հանդես եկող նորամուծությունները հիմնականում վերաբերում են խոնարհման փոփոխություն, հիմքերի կազմությանը, եղանակային և ժամանակային ձևերի մասնավոր դրսևորմանը, ներգործաձև և կրավորաձև խոնարհումների «լիակապար» առանձնացմանը, ինչպես նաև անկանոն բայերի մասնակի «կանոնավորմանը» (էջ 288: Ա և Ու խոնարհման բայերը վերածվում են ի խոնարհման, հիմքի և վերջավորության միջև ներմուծվում է անկապարի կերպածանց՝ **ան (առնանիլ, փիւ. առնուլ, ար գելանիլ, փիւ. արգելուլ)**, ապառնի դերբայի **ոց** մասնիկով արտահայտվում է ներգործականի իմաստը, **-ի** մասնիկով՝ կրավորականի: Անթիվ նորամուծություններ կան եղանակների և ժամանակների քանակի ու կազմության մեջ (օրինակ՝ թողուլ-թողանիցին, ընթեռնուլ-ընթեռնանիցին, կոչիցիէին, մի եղծանիցիէին): Ու խոնարհման ներկայի կրավորական իմաստը՝ արգելանիմբ, ընթեռնանի // ընթեռնանի, թողանի, եղանի, (ու>ի): Մահմանական եղանակի եզակի 3-րդ դեմքի կրավորաձևեր լինում է նեղիւր, լնանիւր, եղանիւր, փեսանիւր:

Մտորադասական և բղձական եղանակներն ունեն հնգական ժամանակաձևեր (էջ 296-297) և այլն: Անկանոն բայերը «կանոնավորվում են», պակասավոր բայերը «լրացվում են» արհեստական ներմուծումներով:

4) Շարահյուսական երևույթներ: Չեն բացառվում արտաքին միջամտությունները. նորամուծություններ են կարարվում լարիներենի օրինակով: Դրանք դրսևորվում են հեւրադաս և նախադաս որոշիչների, հեւրադաս հարկացուցի, նախդրավոր ներգոյականի, նախադասության անդամների համաձայնության, շարադասական կիրառություններում (ամբողջականա մերտ վախճանիւ, սօքրարականէն իղարանէ. ներբորդում ատուր. ըն բարտօ կայսրութեան. նատուր երբորդում. հոչակածաւալ լերինք. ըստ կենի բնականի. ընդէմ /փիւ. 2-դ-ով/ հերերիկոսաց խսրասրտեղից. բնատրութիւն գոլոյ. յոքս առաք «հոգացինք» և այլն):

Աշխատության վերջին՝ «Լարինարանության կանցումը և վերացումը» գլուխը, վերաբերում է լարինարանության հաղթահարմանը և լարինարան հայերենի հեւրագա դրսևորումներին (էջ 317-346): Լարինարանությունը վերանում (հաղթահարվում) է ասորի-ճանական պալբարի ուղիով: Դա նկատվում է՝ 1. Մխիթար Սեբաստացու կողմից՝ նախորդ դարերում եղած ձեռագիր կամ տպագիր երկերի սրբագրման, խմբագրման, հրատարակությ-

յան ընթացքում լարինարիպ ձևերը կրճատելու, վերացնելու աշխատանքներում, 2. Մխիթարի աշակերպներ Վրթանես Ասկերյանի, Դոմինիկոս Բռնուրսյանի աշխատանքներում և 3. Մխիթար Սեբաստացու աշակերպների երրորդ սերնդի (Պեպրոս Արագունացի, Նովիանես Պոնա) կողմից կատարվող «մաքման» աշխատանքներում:

Ամփոփենք.

Գրախոսվող գիրքը լարինարան հայերենի ամբողջական ուսումնասիրություն է՝ հույժ գիտական վերլուծություններով ու բազմաշերտ վստահելի բնութագրություններով՝ կատարված հարյուրավոր գրավոր աղբյուրների փաստերի հիման վրա: Այն չափազանց օգտակար կարող է լինել հայոց լեզվի պարսմությանը զբաղվողներին, սույն թեմային առնչվող այլևայլ հետազոտություններ կատարողներին:

ԷԴՈՒԱՐԴ ՄԿՐՏՉՅԱՆ
Բանասիրական գիտ. դոկտոր